


ՀՀ քաղաքական ապագան «լուռ բազմակողմ զարգացման» հայեցակարգի և արդի տուրբուլենտության խաչմերուկում

Պողոսյան Գարիկ Գ.

Հոգեբանության և քաղաքագիտության ամբիոն, քաղաքագիտության ասպիրանտ, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման սկստեմիս (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0001-5777-4056>
garik.poghosyan2011@gmail.com

ՀՏԳ՝ 327(479.25); EDN: DLLBKK

DOI: 10.58587/18292437-2024.6-22

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Լուռ զարգացում, քաղաքական ապագա, արդի տուրբուլենտություն, գլոբալ, թվային և քաղաքացիական չափումներ, այլընտրանքային աշխարհակարգեր

Политическое будущее армении на пересечении концепции "молчаливого многостороннего развития" и современной турбулентности

Погосян Гарик Г.

Кафедра психологии и политологии, аспирант политологии, Академия государственного управления Республики Армения (Ереван, РА)

Аннотация. В статье раскрывается необходимость определения понятий "политическое будущее" и "современная турбулентность" в контексте будущего Республики Армения. Связывая геополитическую турбулентность и неопределенность с политическими реалиями, статья строит свою теоретическую базу на скудной существующей литературе, углубляя концептуальные основы концепции политического будущего. В то же время, это, пожалуй, первая попытка определить "политическое будущее" как политологический термин в армянском контексте. Кроме того, в статье предпринята попытка представить исследования будущего в рамках более широкой картины внутренней и внешней политической динамики. Во-первых, в ней кратко рассматриваются различные представления о будущем. Во-вторых, обсуждается полицентризм и его влияние на будущее. В-третьих, в нем обсуждаются цифровые, глобальные и гражданские аспекты политического будущего. И, наконец, предлагается концепция "тихого развития" как решение множества рисков, связанных с современной турбулентностью. В целом, статья направлена на развитие полицентрического подхода к будущим исследованиям, в рамках которого альтернативные представления о мировом порядке принимаются как законные и необходимые.

Ключевые слова и словосочетания: "тихое развитие", "политическое будущее", современная турбулентность, глобальная, цифровая и гражданская сферы, альтернативные мировые порядки

The Political Future of Armenia at the Intersection of the Concept of "Silent Multilateral Development" and Contemporary Turbulence

Poghosyan Garik G.

Chair of Psychology and Political Science, PhD student in Political Science, Public Administration Academy of the Republic of Armenia (Yerevan, RA)

Abstract. The article exposes the necessity to define 'political future' and 'contemporary turbulence' in the context of the future of the Republic of Armenia. By linking geopolitical turbulence and uncertainties to political realities, the article builds its theoretical basis on the scarce existing literature deepening the conceptual foundation of the concept of political future. At the same time, it is arguably the first attempt to define 'political future' as a political science term in the Armenian context. In addition, the article attempts to put the future studies in the bigger picture of internal and external political dynamics. First, it briefly discusses various narratives about the future. Second, it discusses polycentrism and its implications for the future. Third, it discusses digital, global and civil dimensions of political future. Finally, it suggests the concept of 'silent development' as a solution to the multiplicity of risks posed by contemporary turbulence. Overall, the article is aimed at the development of a polycentric approach to future studies in which alternative notions of world orders are accepted as legitimate and necessary.

Keywords & phrases: "silent development", "political future", contemporary turbulence, global, digital and civil domains, alternative world orders

Բազմաչափ հասկացություն

Հոդվածում արդի տուրբուլենտություն ասելով ի մասնավորի նկատի է ունենցվում գլոբալ

փոփոխությունների ազդեցությունը քաղաքական իրողությունների գլոբալ և լոկալ ներկայակի վրա: Նկատի ունենալով այն հանգա-

մանքը, որ արդի տուրբուլենտությունը կարող է ունենալ քաղաքական՝ ներքաղաքական և արտաքին քաղաքական, տնտեսական, քաղաքակրթական, սոցիալական և նմանատիպ չափումներ, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ հողվածում դրանք արժարժվում են այնքանով, որքանով առնչվում են գլոբալ քաղաքականության փոխակերպումների արդյունքում ՀՀ քաղաքական հեռանկարների շուրջ ձևավորված քաղաքական միջավայրին քաղաքացիավար քաղաքական մշակույթի համայնապատկերում: Վերլուծության արդյունքում առաջարկվում է արդի տուրբուլենտություն հասկացության, ինչպես նաև քաղաքական ապագա եզրի նոր սահմանում և հետագա հետազոտության առաջարկ:

Այժմ, երբ ՀՀ-ում առաջատար մասնագետները քննարկում են կենսաքաղաքականության հարցեր, քանի որ «քաղաքական գործընթացի դինամիզմի հետևողական սպասումներ ենթադրում է գիտավերլուծական հարստացի ներդրման միջոցով ստրատեգիական պլանավորում կենսաքաղաքականության սկզբունքների հաշվառմամբ» [26, էջ 21], ՀՀ քաղաքական ապագայի տեսակետից հույժ կարևոր է տուրբուլենտություն հասկացության բազմակողմանի ուսումնասիրությունը: Եթե նկատի ունենանք այն, որ տուրբուլենտությունն ունի աշխարհաքաղաքական, բայց նաև ինստիտուցիոնալ և արժեքանական նշանակություն, ապա ակնհայտ է դառնում, որ դրա բոլոր չափումներն առնչվում են նաև ՀՀ քաղաքական հեռանկարներին: Մերձավոր Արևելքում հակամարտությունների թվային աճն ու ինտենսիվության մեծացումն ուղղակիորեն կապված են ՀՀ արտաքին քաղաքական շահերի հետ: Այսպես, պաղեստինա-իսրայելական հակամարտության ընդլայնումը, որը ներառում է Լիբանանի տարածքը, աշխարհաքաղաքական տուրբուլենտության նոր ալիք է, որը վտանգում է ՀՀ կենսական շահերը երկու հարթության վրա: Առաջին, խախտելով պետությունների ինքնիշխանության և հումանիտար սկզբունքներն ու արժեքները Իսրայելը վտանգում է խաղի ընդունված կանոնների վրա գործառնող աշխարհակարգը: Սրանում համոզվելու համար բավական է հետևել Իսրայել-ՄԱԿ հարաբերությունների վատթարացմանը, ինչը տեղի է ունենում լիբերալ-ժողովրդավարական աշխարհակարգի հիմնադիր և ջատագով Արևմուտքի թողտվությամբ: Փաստորեն, ՄԱԿ-ի անդամ պետությունն իր հարձակողական գործողությունները վեր է դասում միջազգային կարևորագույն ինստիտուտից ՄԱԿ-ից: Տեղին էր Ֆրանսիայի նախագահի հիշեցումն առ այն, որ Իսրայել պետությունը ստեղծվել է ՄԱԿ-ի կողմից [12]: Իսրայի ընդունված կանոնների աղաղակող ոտնահարումները վտանգում են ՀՀ

կենսական շահերն այն իմաստով, որ տարածաշրջանում ծավալապաշտական քաղաքականություն վարող այլ պետությունների, մասնավորապես Թուրքիայի և Ադրբեջանի համար կանաչ լույս են վառում, որոնք համոզվում են հարձակողական գործողություններ իրականացնող պետությունների անպատժելիության մեջ:

Երկրորդ հարթությունը Մերձավոր Արևելքում հումանիտար իրավիճակի վատթարացումն է և համագործակցության մշակույթի նախադրյալների չեզոքացումն ի օգուտ աշխարհաքաղաքական սուր մրցակցության պայմաններում ձևավորված ռազմաքաղաքական ճամբարների: Հակամարտությունների աճի, ներքին հարկադիր տեղահանվածների, հումանիտար աղետի պայմաններում ոչ միայն հարցականվում է Մերձավոր Արևելքի հայկական գաղթօջախների ապագան, այլև խարխվում են հորդանական և ուղղահայաց կապեր հաստատելու, միջհասարակական, միջպետական և միջքաղաքակրթական հարաբերությունները Մերձավոր Արևելքի երկրների հետ զարգացնելու հիմքերը: Թեպետ կապերի թուլացումը մեր համոզմամբ կարող է տեսանելի հետևանքներ ունենալ միջնաժամկետ և երկարաժամկետ իմաստով, աշխարհաքաղաքական տուրբուլենտությունը բարդացնում է ՀՀ արտաքին քաղաքական շահերի սպասարկումը: Տուրբուլենտության ծնած անորոշությունները ՀՀ քաղաքական ապագայի տեսակետից անհրաժեշտություն են ստեղծում վերաիմաստավորելու և ՀՀ քաղաքական հեռանկարների համատեքստում սահմանելու «քաղաքական ապագա» և «արդի տուրբուլենտություն» հասկացությունները: Այդպես վարվելու անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ քաղաքական ապագան արդի աշխարհաքաղաքական և անվտանգային տուրբուլենտության տիրույթում որոշակիացնելու գիտակցումով: Դա հնարավորություն կտա խուսափելու վերոնշյալ հասկացությունների հավանական իրարամերժ կամ փոխորացնող սահմանումների ծիրում ՀՀ ազգային շահերը սպասարկող տեսլականի կորստից: Ինստիտուցիոնալ առումով այն կարևոր է ձևի փոխարեն վերջնարդյունք սպասելիորդ բովանդակության վրա կենտրոնանալու նպատակով: Վերջին տասնամյակներում ՀՀ ինստիտուցիոնալ բարեշրջման հիմքում թվում է դրվել է սահմանադրական շարունակական բարեփոխումների գործընթացը: Չգանկանալով ներթափանցել սահմանադրական փոփոխությունների արդյունավետության մեջ փաստենք, որ վերջին տարիներին խորքային անվտանգային և ներքաղաքական խնդիրների ի հայտ գալն ապացուցում է այն, որ ՀՀ քաղաքական ապագայի տեսակետից ոչ այնքան կարևոր է կառավարման մոդելն ու դրա սահմանադրաիրավական ձևը,

որքան այն քաղաքական մշակույթն ու ինստիտուցիոնալ կարողությունների միջավայրը, որոնցում այդ իրավաքաղաքական ձևը ստանում է համապատասխան քաղաքական բովանդակություն: Այստեղ է, երբ ի հայտ է գալիս լուռ բազմակողմ գարգացման հայեցակարգ մշակելու անհրաժեշտությունը, երբ <<-ն և հայկական սփյուռքը փնտրում, հաստատում, համադրում և շաղկապում են տարբեր ուժային կենտրոնների և քաղաքակրթությունների հետ բազմակողմ հարաբերությունները, որոնք ներառում են ինչպես ռազմաքաղաքական, տնտեսական, պետական քաղաքականության ու իրավունքի տարբեր, այնպես էլ կրթական, մշակութային, հասարակական: Վերջիններս լուռ բազմակողմ գարգացման հայեցակարգում կարող են ներառվել որպես գլոբալ քաղաքացիական հասարակություն կառուցելու և նրանում հայկական շահերի ներկայացվածությունն ապահովելու գործիքներ, իսկ միջպետական բազմակողմ հարաբերություններում լուռ գարգացման հայեցակարգը ենթադրում է չհակադրվելով հզորանալու ռազմավարություն:

«Քաղաքական ապագա» եզրույթը քաղաքագիտական գրականության մեջ հազվադեպ է պատահում: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ռուս քաղաքագետներն առաջին անգամ եզրույթն օգտագործել են 1996-ին Ռուսաստանի քաղաքական ապագան դիտարկելով էթնոագային տիրույթում [25]: Ավելի ուշ, Բաշիրով Լ. Ա.-ն քաղաքական ապագա եզրույթը կիրառել է Ռուսաստանի ապագան իսլամական հեռանկարների տեսանկյունից վերլուծելիս: Նա Ռուսաստանի քաղաքական ապագան սահմանել է որպես «նրա ներքաղաքական ու արտաքին քաղաքական գարգացման վեկտոր, սոցիալական բարեփոխման ու բուսաստանյան հասարակության հոգևոր նորացման իմաստ ու բովանդակություն» [24]: Ընդ որում, հեղինակն այն կարծիքին է, որ Ռուսաստանի քաղաքական ապագան «օբյեկտիվորեն կապված է ընդհանրապես կրոնի ու մասնավորապես իսլամի վերելքի հետ» [24]: Մեր հետազոտության տեսադաշտում հայտնված արևմտյան գիտնականներից քաղաքական ապագա եզրույթը կիրառում է միայն Նիլ Սմիթը: Նա, չսահմանելով քաղաքական ապագա հասկացությունը, պնդում է, որ տարածքային էություն չունեցող գլոբալիզացիան (spaceless globalisation) «կանխարգելում է այլընտրանքային քաղաքական ապագաները, ապաքաղաքականացնում է պատմությունը, չնայած միայն ներկայի ու ապագայի պատմությունը» [18, էջ 23]: Առաջին հայացքից հակասական այս ձևակերպումը հստակեցվում է գիտնականի ընդհանրական վերլուծության մեջ, երբ աշխարհակարգի ձևավորման էվոլյուցիան ներկայացվում է կայսերական քաղաքական,

տնտեսական շահերի, աշխարհի մասին պատումների ու աշխարհագրական դետերմինիզմի ուսայնակով:

Ապագաբանական ուսումնասիրությունները, սակայն, շարունակում են մնալ քաղաքագետների ուշադրության կենտրոնում: Արդի աշխարհի մարտահրավերներով պայմանավորված առկա է ընդհանուր միտում ապագայի ուսումնասիրությունից անցում կատարել ապագաների ուսումնասիրության: Այսպես, բիոտնտեսության ու կայուն գարգացման կապը հետազոտող մասնագետները դիտարկում են բիոծովահենության, բիոանվտանգության, բնապահպանական դեգրադացման ապագաները [7], իսլամական քաղաքակրթությունն ուսումնասիրող մասնագետներն առաջարկում են վաղվա երեք տարբերակների (the Three Tomorrows) տեսությունը [15]: Ավելին, համեմատական մեթոդով Թայվանում, Մեքսիկայում և Գվատեմալայում անցկացված հետազոտությունները լույս են սփռում կրթական ոլորտում ապագայի վերաբերյալ տարբեր սցենարների ձևավորման հարցում մշակութային գործոնների ազդեցության վրա [1], իսկ սերունդների տարբերվող մտածելակերպն ուսումնասիրող հետազոտողներն առաջարկում են «այլընտրանքային ապագաների» [11] գաղափարը:

Քաղաքագիտական բառարաններում քաղաքական ապագա և ապագա եզրույթների սահմաններ չեն հանդիպում: Բերված օրինակներից ակնհայտ է դառնում, որ քաղաքագիտական գրականության մեջ քաղաքական ապագա եզրույթը չունի համընդհանուր ճանաչելի սահմանում: Ավելին, բերված օրինակների տարբերվող բնույթից հասկանալի է դառնում, որ քաղաքական ապագան կարելի է ընկալել տարբեր կերպ՝ հարմարեցնելով կոնկրետ հետազոտական նպատակների:

Գլոբալ քաղաքականության մեջ տուրբուլենտության եզրը համակողմանի ուսումնասիրության է ենթարկել ամերիկացի գիտնական Ջեյսմ Ռոզենաուն: Դեռևս 1990 թվականին գիտնականը վերլուծեց տուրբուլենտությունը որպես համաշխարհային քաղաքականության մեջ առկա օրինաչափություն կամ վիճակ: Նրա կարծիքով քաղաքական առօրյան հագեցած էր այնպիսի երևույթներով, ինչպիսիք էին քառսը, պատահականությունը, շփոթմունքն ու հակասականությունը [17, էջ 48]: Ընդ որում, քաղաքական ընկալումներն ու վարքն իջեցվում էր ինստիտուցիոնալից անհատական մակարդակ, որտեղ չկային ունիվերսալ լուծումներ, իսկ մարդկանց խոսքն ու գործը «պայմանավորված էին մշակութային, տարածաշրջանային և այլ հանգամանքներով» [17, էջ 50]: Համաշխարհային քաղաքականության տեսակն ու ընթացքը դիտարկելով կարգի առկայության ու բացա-

կայության երկնյուղ ուսպնակով (order and disorder)՝ Չ. Ռոսենաուն կարգի բացակայությունը (disorder) բացատրում է ոչ թե որպես գործընթաց, այլ «սոսկ համակարգի նկարագրություն» [17, էջ 53]: Թերևս հենց այս մոտեցմամբ պայմանավորված հողվածի ուսումնասիրության կենտրոնում աշխարհաքաղաքական ու անվտանգային հարցերի համակարգային վերլուծություններն են:

Այժմ մարդկությունն ապրում է սպառնալիքների և հնարավորությունների հարափոփոխ միջավայրում: Այն դեպքում, երբ քաղաքակրթության առաջընթացը կարող է ապահովել տարատեսակ խնդիրների լուծումներ, առաջ է բերում նաև տեխնոլոգիական հնարավորությունների մեծացմամբ պայմանավորված վտանգներ: Այսպիսի սպառնալիքներն ունենում են բազմամակարդակ՝ գլոբալ-աշխարհաքաղաքական-ինստիտուցիոնալ-հասարակական-անհատական դրսևորումներ: Դիցուք՝ արհեստական բանականության աննախընթաց աճով պայմանավորված կարելի է պնդել, որ հեղափոխականացված է մարդկության ընթացքը: Սակայն միևնույն ժամանակ վերջինս ստեղծել է այնպիսի նորահայտ սպառնալիք, ինչպիսին «թվային ավտորիտարիզմն է», ինչը կարող է ենթադրել քաղաքացիների քաղաքական ու քաղաքացիական ազատությունների նկատմամբ վերահսկողություն [4, էջ 20]: Միևնույն ժամանակ արհեստական բանականությունը կիրառվում է հանրային ծառայությունների որակի բարձրացման նպատակով: Հանրային կառավարման ոլորտում այս մոտեցումը ստացել է «խելացի կառավարում» (smart governance) անունը: Վերջինս կիրառվում է այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են երթևեկությունն ու դատական համակարգը, իսկ պետությունը «խելացի քաղաքների զարգացման» և կառավարման բնագավառներում ներգրավում է դիցուք՝ չինական տեխնոլոգիական հսկաների [4, էջ 20]: Թվային տեխնոլոգիաների ազդեցությունը ոչ միայն ինստիտուցիոնալ, այլև հասարակական մակարդակում այնքան նշանակալի ծավալների է հասել, որ այժմ խոսք է գնում նաև «թվային բարեկեցության» մասին, որը ենթադրում է անհատ-հասարակություն-արհեստական բանակություն փոխազդեցությունների միջավայր [4, էջ 20]: Ասվածից հետևում է, որ նորագույն տեխնոլոգիաների ներբերումը հանրային կառավարման ոլորտ ինստիտուցիոնալ, հասարակական մակարդակներում առաջ է բերում և՛ առողջ մրցակցություն, և՛ ծնում է անորոշություններ: Տուրբուլենտ միջավայրում գործառնող համակարգերն այսպիսով գործի են դրվում սպառնալիքների ու հնարավորությունների բազմաթիվ փոփոխականների միջակայքում: Թվային դարաշրջանի սպառնալիքներն

ու հնարավորությունները տարածվում են ոչ միայն հանրային կառավարման ու «խելացի կառավարման» նոր սկզբունքների, այլև ինքնիշխանության, միջազգային կարգի փոխակերպումների, կանաչ տեխնոլոգիաների ապագայի, մասնավոր ու հասարակական սեկտորի գործունեության վրա: Այսպես, աֆրիկյան Մենեգալը քաղաքական ինստիտուտների մակարդակում ձգտում է սահմանափակել բարձր արժեք ունեցող տվյալների (data) հասանելիությունը, ինչն արդեն ստացել է «թվային ինքնիշխանություն» անվանումը՝ չնայած տեխնոլոգիական առումով մեծացել է Մենեգալի կախվածությունը Չինաստանից [9, էջ 25]: Արհեստական բանականության և թվային տեխնոլոգիաների ազդեցությունը երկրների ինքնիշխանության, ինստիտուցիոնալ կարողությունների վրա իր հերթին ծնել է ոչ միայն վտանգներ (ավտորիտար վարչակարգերի կողմից մարդու ազատությունների անհիմն սահմանափակում), սպառնալիքներ (անհատական տվյալների պաշտպանություն) և հնարավորություններ (միջազգային փոխգործակցության նոր տիրույթ), այլև ակնկալիքներ (համագործակցային կարողությունների հզորացում պետությունների միջև): Հենց վերջինը նկատի ունենալով՝ մասնագետները առաջարկում են «թվային սահմանադրականության» [9, էջ 26] գաղափարը, ինչը կարող է մեկտեղել թվային քաղաքականությունն ու ռազմավարությունները և սահմանել խաղի ընդունված կանոններ: Հենց «թվային սահմանադրականության», «թվային ինքնիշխանության», «խելացի կառավարման» գաղափարներն ու դրանց կապը գլոբալ կառավարման, միջազգային կարգի, աշխարհաքաղաքականության հետ ի ցույց են դնում արդի քաղաքական տուրբուլենտության բազմաշերտությունը: Իսկ ինստիտուցիոնալ և անհատական կյանքի փոխակերպումները քաղաքական անորոշությունները կապում են մի կողմից քաղաքական ապագայի, մյուս կողմից՝ քաղաքական հաղորդակցության խնդիրների հետ, քանի որ տուրբուլենտությունը ներկայանում է որպես բազմաթիվ դերակատարներից բաղկացած հարափոփոխ համակարգ:

Այլընտրանքային աշխարհակարգեր. թվային և քաղաքացիավար մոտեցում

Աշխարհակարգի և քաղաքական ապագայի մասին պատկերացումները նախորդ դարում ընթանում էին տեսականների մրցակցության պայմաններում, քանի որ երկբևեռ աշխարհը նախքան Սառը պատերազմի ավարտը թելադրում էր մրցունակ և մրցակցող պատումների մրցավազք: Չարգացող երկրների համար արևմտյան և արևելյան բևեռների միջև աճող լարվածությունն ի վերջո հարցականի տակ դրեց «եվրացենտրիստական» աշխարհընկալումը, որի

«մերժման հիմքում դրվեցին Եվրասիայի, Եվրաֆրիկայի և Աֆրոասիայի գաղափարները: Չևավորվեց կարծիք, որ առաջընթացի լավագույն տարբերակը «ազգային մշակույթների գարգացումն ու ինքնաբավ (self-contained) ազգային քաղաքականությունն է» [3, էջ 4]: Քաղաքական ապագայի վերաբերյալ երեք նմանատիպ պատումները սակայն ունեին տարբեր գաղափարաբանական հիմքեր և առաջնահերթություններ: Այսպես՝ «աֆրոասիական շարժման հիմքում բնական ռեսուրսների նկատմամբ պետությունների ինքնիշխան իրավունքի հաստատումն էր: Ունանք շեշտում էին աղքատ պետությունների «գարգացման իրավունքը», մինչդեռ «եվրասիականության տեսաբաններին չէին հետաքրքրում մարդու իրավունքներին առնչվող հարցերը, իսկ վերջին ժամանակներում նրանք անգամ խիստ քննադատում են դրանք՝ դրակելով որպես «արևմտյան, փտող և պիղծ» [3, էջ 24]: Տարբերություններով հանդերձ աշխարհակարգի և քաղաքական ապագայի մասին այս ընկալումները հար և նման են այն առումով, որ «բոլոր երեք շարժումները խոստացել են փոխել տարածության և ուժի հարաբերությունը և հաղթահարել արևմուտքի տնտեսական ու մշակութային գերազանցությունը» [3, էջ 26]: Քաղաքական ապագան, սակայն, չէր սահմանափակվում սոսկ մեկ համախումբ ներկայացնող գաղափարների համակարգով, ուստի ավելի խորը վերլուծական մեկնաբանության կարիք ունի: Ընդ որում քաղաքական ապագա ասելով գլխավորապես պետք է հասկանալ այլընտրանքային աշխարհակարգի մասին շրջանառվող պատումները:

Ավելին, եթե նկատի ունենանք արևմտյան ռազմական արշավները Մերձավոր Արևելքում, Միջին և Եվրոպայի քաղաքացիական պատերազմը, հակամարտությունները Լեռնային Ղարաբաղում և Ուկրաինայում, ապա ակնհայտ է դառնում, որ Միավորված Ազգերի Կազմակերպության ի հայտ գալով ոչ թե նսեմացվում, այլ բացորոշվում են քաղաքակրթությունների երկխոսության հնարավոր ելքերը, ունիվերսալ արժեքները որքան էլ միակուռ, բայց և այնպես փոխարացնող են ու հարստանում են բոլոր քաղաքակրթությունների ներքերած արժեքներով: Չէ՞ որ հետսոցիալիստական հասարակություններին պատուհասած աշխարհացունց փոփոխությունները նաև ներքին կազմակերպական կողմնորոշիչների վերաբերյալ էին, երբ հին ընկալումները փոխարինվում էին միանգամայն նորերով, իսկ այլընտրանքային լուծումները մինչ օրս պահանջում են ինքնության, ազգային ու պետությանական կենսունակության, համագործակցության ներուժի, դաշինքների ու քաղաքակրթական ուղենիշների համադրելիության գիտակցում ու շարունակական վերաարժևորում:

Այս համատեքստում նորագույն տեխնոլոգիաների առաջացրած սպառնալիքների և հնարավորությունների տիրույթում նկատելի է անորոշությունների որոշակի մակարդակ, ինչը հայեցակարգային մոտեցումներով կարգավորելու հիմնավորումների համար պարարտ հող է: Այստեղ է, որ ի հայտ է գալիս գլոբալ մարտահրավերներից բխող ինստիտուցիոնալ խնդիրները համակարգային վերլուծության ենթարկելու պահանջարկվածությունը: Առկա է կարծիք, որ «ինստիտուցիոնալ էվոլյուցիան հնարավոր է փոխի միջազգային հասարակության ինստիտուտների ներքին հավասարակշռությունը (օրինակ՝ ավելի շատ առևտուր, ավելի քիչ պատերազմ)՝ այդպիսով փոխելով միջազգային կարգի բնույթն այն թուլացնելու փոխարեն» [16, էջ 5]:

Վերոնշյալ տրամաբանությունն էլ հանգեցնում է հետազոտողների և տեսաբանների որդեգրած նոր մոտեցումների, գլոբալ կառավարման ու հասարակական կյանքի կերպափոխումների, աշխարհակարգի մասին նոր պատկերացումների ձևավորման: Այդպիսին է Պրահայի «Չարլզի» համալսարանի դոկտոր Լադիսլավ Ժեմանեկի՝ պրագմատիկ բազմակենտրոնության (pragmatic polycentrism) մասին տեսությունը [23, էջ 24]: Չուզահեռներ անցկացնելով ուժային կենտրոնների տեսականների միջև՝ գիտնականն այդպիսով ձգտում է գտնել մի ընդհանուր բանաձև, որը կիրարկելի կլինի բոլորի դեպքում: Հեղինակը մեջբերում է դեռ 2019 թվականին ՌԴ նախագահ Վ. Պուտինի արած այն հայտարարությունը, որ այլ պետություններ կարող են առանց սուվերենության լինել պետություն, իսկ Ռուսաստանը՝ չի կարող [23, էջ 24]: Ասվածի համատեքստում գիտնականը հիշատակում է նաև Եվրամիության «ռազմավարական ինքնավարությունը», Չինաստանի «երկակի շրջանառությունը» (dual circulation), Դոնալդ Թրամփի՝ «նախ Ամերիկան» քաղաքականությունը: Հիմնվելով տարատեսակ ուժային կենտրոնների խորքային տարբերությունների վրա՝ գիտնականը հանգում է այն եզրակացության, որ «բոլոր այս ռազմավարությունները դեպի բազմակենտրոն (polycentric) գլոբալ կարգ կերպափոխման ախտանշաններ են, որոնք այսպիսով մարմնավորում են գլոբալիզացիայի և ապագլոբալացման, ինտեգրացիայի և տարածաշրջանացման բարդ դիալեկտիկան» [23, էջ 24]: Այնուհետև հեղինակն ամփոփում է, որ «գլոբալ վերակառուցվածքայնացումը խիստ մեծ կարևորություն ու կշիռ (relevance and significance) ունի սոցիալ-տնտեսական, ինչպես նաև քաղաքական գործընթացների համար, որոնք նաև ազդում են կառավարման (governance) կոնցեպտի վրա» [23, էջ 24]: Այսպիսով, արդի քաղաքական տուրբուլենտությունը և՛ ինստիտուցիոնալ, և՛ անհատական, և՛ միջազգային կարգի մակարդակներում ունի քաղաքա-

կան գործընթացները կերպարավորող համակարգի բնույթ: Ասվածից կարելի է բխեցնել մեր այն համոզմունքը, որ արդի քաղաքական տուրբուլենտության և գոբալ կառավարման հիմնախնդիրների միջև ներքին կապերի բացահայտման կարևոր միջոցներ են աշխարհաքաղաքական և անվտանգային գործընթացների համակարգային ուսումնասիրությունները:

Համակարգային խնդիրներով պայմանավորված ժամանակակից ամերիկյան հետազոտողներն ուշադրություն են հրավիրում ավանդաբար կայացած ամերիկյան ժողովրդավարական ինստիտուտների նկատմամբ մարդկանց հավատի սասանման վրա: Վերջին ժամանակաշրջանի սոցիոլոգիական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ամերիկացիների մեծամասնությունը կարծում է «ամերիկյան ժողովրդավարությունը վտանգված է» [2, էջ 23]: Ընդ որում այս տեսակետին են հարում ինչպես ձախակողմյան, այնպես էլ աջակողմյան քաղաքական ուժերի համակիրները: Մասնավորապես «ազգային պահպանողականների» հիմնական դժգոհությունն այն է, որ «գոբալ կապիտալիզմը վնասում է շարքային ամերիկացիներին երկրից դուրս մղելով աշխատատեղերը (outsourcing) և երկիր հրավիրելով (insourcing) ներգաղթյալների» [2, էջ 24]: Ընդ որում և՛ «աջերը», և՛ «ձախերը» համակարծիք են, որ կապիտալիզմի բերած խնդրի լուծումը կայանում է «տնտեսական ինստիտուտների նկատմամբ կառավարության ավելի ուժեղ վերահսկողության» մեջ, որպեսզի վերջիններս կարողանան դիմադրել վերնախավի ճնշումներին» [2, էջ 24]: Հակադրվելով կապիտալիզմի քննադատությանը որպես ժողովրդավարության հակոտնյա՝ Հարվարդի Քենեդու դպրոցի դասախոս Արթուր Բրուկսն այն կարծիքին է, որ «կապիտալիզմը կարող է ժողովրդավարությունն ամրապնդել և ավելի կենսունակ դարձնել: Սակայն սա տեղի է ունենում միայն երբ առկա է մի երրորդ փոփոխական՝ քաղաքացիական առաքինությունը, հանրային ազնվության և քաղաքացիավարության (civility) տեսքով» [2, էջ 24]: Փաստորեն, ամերիկյան քաղաքական իրողությունները ներկայացվում են մի կողմից ինստիտուցիոնալ վստահության ճգնաժամի տեսքով, մյուս կողմից՝ քաղաքացիավարության լույսի ներքո: Եթե հակադիր բևեռների տեսակետները դառնում են մի համաձուլվածք, ապա դա այն ակնհայտ պատճառով, որ քաղաքական անորոշությունները և՛ համակարգային են, և՛ ինստիտուցիոնալ, և՛ արժեքանական: Այս առումով պատահական չէ մեր այն համոզմունքը, որ արդի քաղաքական տուրբուլենտության անվտանգային ու աշխարհաքաղաքական չափումները բազմաշերտ են: Մինևույն ժամանակ հակված ենք այն տեսակետին, որ դրանք նաև

քաղաքական հաղորդակցության ու քաղաքացիավարության տիրույթում են:

Ժողովրդավարության ինստիտուցիոնալ ճգնաժամի մասին գիտավերլուծական քննարկումներն ընթանում են առնվազն մեկ տասնամյակ: Պրոֆեսոր Նաթան Գլեյզերը ժողովրդավարական կառավարման առավելություններն ու թերությունները տեղորոշում է դրանց անորոշության մեջ: Գիտնականն առաջին հայացքի տարօրինակ կերպով պնդում է, որ ժողովրդավարության հաջողության չափման միավոր գոյություն չունի: Մի կողմից դրանք կարող են լինել ոչ հստակ, մյուս կողմից՝ հակասական: Դիցուք որո՞նք են հաջողության գրավականները, գոհունակ փոքրամասնությունը, տնտեսական հնարավորությունները, թե՛ քաղաքական կայունությունը՝ անջատողականության բացակայությունը [8, էջ 7]: Հաջորդիվ գիտնականն իր իսկ հարցերն անորոշության տիրույթ բերելով պնդում է. «Բայանիայի բասկական ու կատալոնական շրջաններն ավելի բարգավաճ են, քան մնացած երկիրը, սակայն դժգոհ են իսպանական պետության մեջ ունեցած իրենց տեղից, և երկու տարածաշրջաններում էլ առկա են ուժեղ անջատողական ու ինքնավար շարժումներ» [8, էջ 7]: Գիտնականը գալիս է այն եզրահանգման, որ խորը բաժանում ունեցող հասարակություններից յուրաքանչյուրն ինքնատիպ է և խնդիրների բուն էությունը հասկանալու համար անհրաժեշտ է խորամուխ լինել հարաբերությունների դինամիկայի մեջ [8, էջ 8]: Հեղինակը որպես օրինակ բերում է Կանադայի երկվեզվությունը, ԱՄՆ-ի ռասայական բաժանումները՝ վերջինս անվանելով «ամերիկյան երկրնտրանք» [8, էջ 10]: Ընդ որում, հեղինակը հստակ պատասխան չունի այն հարցին, թե արդյոք սևամորթների փողոցային բռնի պայքարը նախորդ դարի վաթսուներկաներին և յոթանասուներկաներին հանգեցրին իրավահավասարության, թե՛ ինստիտուցիոնալ ժողովրդավարությունը [8, էջ 10]: Ասվածը գալիս է վերահաստատելու այն վարկածը, որ քաղաքական անորոշությունների ծնած տուրբուլենտությունը և՛ արժեքանական է, և՛ ինստիտուցիոնալ, և՛ քաղաքացիական: Այն փաստորեն ձևավորում է անհատ-հասարակություն-քաղաքական ինստիտուտներ եռանկյուն, որտեղ դերակատարների փոխկախվածությունն անգամ հետազոտողի համար հաճախ մնում է անկախված:

Ավելի ուշ կանադացի քաղաքագետ Փոլ Հովլը պիտի վերաարժևորեր քաղաքական տուրբուլենտության ինստիտուցիոնալ չափումը: Առաջին, նա վերահաստատում է այն, որ «մենք սկանստեսն ենք լինում ժողովրդավարական համակարգի գործառնումից համատարած դժգոհության հետևանքների» [10, էջ 16]: Ընդ որում, ակնհայտ է սերունդների միջև ընկալումների

տարբերությունը: Սոցիոլոգիական հարցումները ցույց են տալիս, որ ժողովրդավարության պահանջարկվածությունը նվազում է մեծից փոքր տարիքային խմբերում [10, էջ 16]: Ընդունելով այն մասնագետների տեսակետը, որ «քննադատող քաղաքացիները» չեն հեռանում ժողովրդավարական սկզբունքների նկատմամբ ունեցած իրենց քաղաքացիական հանձնառությունից՝ հեղինակը կասկած է հայտնում առ այն, որ շատ այլ քաղաքացիներ չեն հրաժարվի ժողովրդավարությունից [10, էջ 20]: Այսպիսով, ինստիտուցիոնալ ժողովրդավարության նգնաժամն ուղղակիորեն առնչվում է քաղաքացիների արժեքանական կողմնորոշիչներին, իսկ վստահության անկմամբ պայմանավորված անորոշությունները արդի քաղաքական տուրբուլենտությանը տալիս են քաղաքական հաղորդակցության և քաղաքացիակենտրոն բնույթ: Թերևս հենց այս նկատառումներով ռուս քաղաքագետ Սվիտոսլավ Կասպեն արժարժում է «գլոբալ քաղաքացիական պատերազմի» [21, էջ 66] թեման: Ընդ որում, երևույթի մեկնաբանությունը կրկին լույս է սփռում դրա գլոբալ, ինստիտուցիոնալ, քաղաքացիական չափումների վրա՝ վերահաստատելով արդի քաղաքական տուրբուլենտության բազմագործոն լինելու մեր համոզմունքը: Հավաստիացնելով, որ գլոբալ քաղաքացիություն գոյություն չունի, քանի որ կոսմոպոլիտ քաղաքացիական համակարգ այդպես էլ չի հաջողվել ձևավորել, իսկ գլոբալ քաղաքացիական հասարակություն ևս չկա ինստիտուցիոնալ կարողությունների ու ռեսուրսների բացակայության պատճառով՝ Ս. Կասպեն կարծում է, որ առաջացել է «համաշխարհային քաղաքացիական ոգի» [21, էջ 66]: Տուրբուլենտության մեկնաբանության տեսակետից հատկանշական է Ս. Կասպենի այն պնդումը, որ. «*ցանկացած պատերազմ՝ և՛ նրանք, որոնք երկար ժամանակ մղվել են, և՛ նոր ի հայտ եկողները, սերտաճում են գլոբալ քաղաքացիական պատերազմի համատեքստին, քանի որ բոլորը՝ և՛ վերնախավերը, և՛ հանրությունը, ուզում են իրենց բաժինն ունենալ: Իսկ սա քաղաքացիական հարց է*» [21, էջ 66]: Գլոբալ քաղաքացիական պատերազմի մասին եզրույթը գլխի վայր շուռ է տալիս կայուն զարգացող հետսառըպատերազմյան լիբերալ աշխարհակարգի մասին դատողությունները: Մյուս կողմից՝ Սիրիայում, Լեռնային Ղարաբաղում, Ուկրաինայում տեղի ունեցած և ընթացիկ հակամարտությունները բնորոշում են տուրբուլենտության գլոբալ, աշխարհաքաղաքական և անվտանգային մակարդակները, իսկ «գլոբալ քաղաքացիական» օրինաչափությունների սահմանումը բխում է աշխարհաքաղաքական ու անվտանգային միջավայրից: Սակայն հարց է ծագում, թե «գլոբալ քաղաքացիական պատերազմի» եզրն ինչ առնչություն ունի գլոբալ

կերպավորությունների ընդհանուր տրամախոսության հետ. արդյո՞ք փոխկախվածությունը միակողմանի է: Մեր կարծիքով հարցի պատասխանը պետք է փնտրել գլոբալ մարտահրավեր-պատասպան բիֆուրկացիայի ծիրում: Տեխնոգեն հասարակության նետած գլոբալ և աշխարհաքաղաքական մարտահրավերները նաև քաղաքակրթական են այն առումով, որ դրանց առկայությամբ հարցականվում են համամարդկային քաղաքակրթության քաղաքական ապագայի հորիզոնները: Այստեղից էլ բխեցնում ենք արդի քաղաքական տուրբուլենտության գլոբալ, աշխարհաքաղաքական, անվտանգային ենթաշերտերի կապը քաղաքական ապագայի հետ:

Ժամանակակից տեսաբաններն աշխարհի համամոլորակային խնդիրներն աներկբայորեն հանգեցնում են աշխարհաքաղաքական նկրտումների մեկնաբանությանը: Այսպես՝ գլոբալիզացիայի տարատեսակ հետազոտների միջև համեմատություն անցկացնելով՝ Փոլ Տակերը դրանք բնորոշում է որպես «*Պեկինի նկրտումներ, Մոսկվայի պատեհապաշտություն, Վաշինգտոնի՝ քայքայիչ խառնաշփոթի վերածվող երկարաժամկետ սկիզբոգ և Եվրոպայի կայունության պատրանք*» [22, էջ 15]: Քսաներորդ դարավերջի և քսնամեկերորդ դարի սկզբի իրադարձությունները որակելով որպես «երկրորդ գլոբալիզացիա»՝ հեղինակն այն բնորոշում է որպես «*տնտեսական կառուցվածքով, միջազգային ինստիտուտներով և մասնակցության ընդգրկումով առանձնացող*» [22, էջ 15]: Նկատի ունենալով ազգային արժույթի և տնտեսական գործոնի որոշիչ դերը աշխարհակարգի ձևավորման և դրանում ունեցած կշռի վրա՝ հեղինակը շեշտում է, որ «*ինչպես ֆունտ սոնեռլինգի դերը համաշխարհային ֆինանսական համակարգում նշանավորեց «պաքս Բրիտանիկան» և հակառակը, այնպես էլ դողաբը նշանավորեց «պաքս ամերիկանան»*» [22, էջ 18]: Մեկնաբանությունից ու միջազգային կարգին տրված բնորոշումներից ակնհայտ է դառնում, որ քաղաքական իրողությունները մի կողմից առնչվում են արդի տուրբուլենտությանը, ինչպիսիք են արդեն վկայակոչված «պատեհապաշտությունն ու քայքայիչ խառնաշփոթը»: Մյուս կողմից, սակայն, միջազգային դերակատարների մրցակցության բնորոշումները վկայում են քաղաքական ապագայի կառուցման հարատև մրցակցող պատումների առկայության մասին: Այսպես՝ «*ԱՄՆ-ն ու Չինաստանը միմյանց դեմ են դուրս գալիս ամբողջ աշխարհում: Անկասկած դա կշարունակվի ամեն կերպ բոլոր հնարավոր ոլորտներում՝ առևտրի, ֆինանսների, կիբերտարածության, տեխնոլոգիայի, կրթության, քարոզչության, բնեռային հետազոտությունների, տիեզերքի և այնպիսի սասպրեզնետում, որոնք դեռ նոր են առաջանում*» [22, էջ 25]: Որպես

աշխարհաքաղաքական ու գլոբալ նկրտումների ծնած միջազգային կարգի տուրբուլենտության լուծում Փ. Տակերն առաջարկում է մի ունիվերսալ գաղափար՝ «համապարփակ գլոբալ սահմանադրական կարգ» [22, էջ 27], ինչն առաջին հայացքից ուտոպիստական է, սակայն արդի լիբերալ աշխարհակարգի առավել գորեղ և իրավասու ինստիտուտներով կենտրոնացած գլոբալ կառավարման համակարգ է ենթադրում: Աշխարհակարգի երկրորդ տեսլականն ազատական ինտեռնացիոնալիզմն է (libertarian internationalism) ըստ հեղինակի, ինչը հար և նման է դասական լիբերալիզմին, սակայն միջազգային կառույցների խիստ սահմանափակ դերով: Այս կարգի հենասյունն ազատ միջազգային տնտեսական հարաբերություններն են, որոնք զսպում են սոցիալական պետության հակված պոպուլիստական և ժողովրդավարական երկրներին: Երրորդ տեսլականն ազգային ինքնիշխանության վերականգնումն է [22, էջ 27]: Փաստորեն գլոբալ տուրբուլենտության համատեքստում առաջարկվող լուծումները առնվազն այդ դեպքում ուղղակիորեն առաջարկում են քաղաքական ապագայի տեսլական և միջազգային կարգ, ինչը վերահաստատում է «արդի տուրբուլենտություն» հասկացության նշանակությունը քաղաքական ապագան կանխատեսելու հարցում: Աշխարհակարգի ինստիտուցիոնալ մակարդակը, սակայն, միակը չէ, քանի որ անհատները նույնպես ստեղծված բազմամակարդակ իրողություններում դիտարկվում են որպես իրավահավասար քաղաքական դերակատարներ: Այս պատճառով Փ. Տակերը փաստում է, որ միջազգային համակարգի լեգիտիմությունն ունի երկու չափում. պետությունների միջև և առաձին երկրների ու նրանց բնակիչների միջև [22, էջ 31]:

Գլոբալ և լոկալ (քաղաքացիական) դրսևորումներ

Միջազգային կարգի և քաղաքական ապագայի տեսլականի խաչաձևումներում ի հայտ են գալիս առանձին երկրների գլոբալ և աշխարհաքաղաքական նկրտումների ուրվագծերը: Մասնավորապես մասնագետները կարծում են, որ դիցուք Չինաստանն ունի հոգնակի ինքնություն (multiple identities). «այն ինքնանույնականացվում է կապիտալիստական բնորոշիչներով սոցիալիստական երկրի հետ, արագ զարգացող երկրի, արևմտյան տերությունների, Ճապոնիայի և Ռուսաստանի ձեռքին ստորացուցիչ պատմության գոհի և վերջապես պատասխանատու մեծ տերության հետ» [6, էջ 256]: Այս պատմաքաղաքական շփոթից էլ բխում են նրա աշխարհաքաղաքական նկրտումները, քանի որ վերջինս ձգտում է Ասիայում ստեղծել «ընդհանուր ճակատագրով համայնք» [6, էջ 262]: 1980-ականներին Չինաստանը փոխարինեց իր ինքնավարության քաղաքականությունը՝ կողմնորոշ-

վելով դեպի տարածաշրջանային առավելություններ: Չինաստանի «բաց դռների» քաղաքականությունը հիմնվում էր «*դինամիկ շուկայական ինստիտուտների և թույլ պաշտոնական ինստիտուտների վրա*»: Այս քաղաքականության հիմքում Չինաստանի և հարավ-արևելյան Ասիայի չինական համայնքների միջև հարաբերություններն էին [5, էջեր 69-70]: Ասիական տերությունների խաղատախտակի մեկ այլ գերակա խաղացող է Հնդկաստանը, որը «*հակված է տարածաշրջանային պայմանավորվածությունները դիտարկելու որպես հետազայի բազմակողմ առևտրի ազատականացմանն ուղղված հիմնասյուններ*: Այս իմաստով, *ռեգիոնալիզմը դիտարկվում է ոչ թե որպես գլոբալիզացիայի փոխարինում, այլ լրացում*» [5, էջ 73]: Չնայած քաղաքական ապագայի վերաբերյալ տարատեսակ պատկերացումների ու ռազմավարությունների առկայությանը՝ մեծ ու փոքր պետությունները ստիպված են դրանք տեղորոշել նաև համամոլորակային տեխնոգեն քաղաքակրթության ծնած անորոշությունների կամ հնարավորությունների տիրույթում ևս:

Այսպես, տվյալների կուտակման և կիրառման հեռահար ազդեցության տիրույթը բացահայտվում է, երբ իշխանություններն օգտագործում են դրանք մարդկանց վարքի դրսևորումների վրա ազդելու, կանխատեսումներ անելու նպատակով (հանցագործությունների կրկնություն, մահվան ելքով հիվանդություն) [20, էջ 67]: Աշխարհում մրցակցությունն ու կերպափոխումը տեխնոլոգիական առաջընթացի ուսանյակով դիտարկող մասնագետները կարծում են, որ «*ժամանակի ընթացքում մենք ավելի ու ավելի կնկատենք, որ շրջապատված ենք անհավանական ուժի, խորաթափանցության (subtlety) և բարդության տեխնոլոգիաներով, որոնց մեծ մասը մենք հազիվ ենք ընկալում, ուր մնաց կառավարենք*» [20, էջ 69]: Տեխնոլոգիական առաջընթացով պայմանավորված բարդությունները, եթե հանգում են կառավարման հիմնախնդրին, ապա պարզից էլ պարզ է, որ ամուր թելերով կապված են գլոբալ քաղաքականության բազմադերային միջավայրին, այլապես կհամարվեին գուտ ազգային հիմնախնդիրներ: Այստեղ էլ ի հայտ են գալիս արդի տուրբուլենտության ու քաղաքական ապագայի երկկողմ հարաբերությունները քաղաքական դերակատարների ու քաղաքական հաղորդակցության հետ: Ուստի, Չեյմի Սուսկինդն իր տեխնոլոգիական մոտեցման հիմքում դնում է այն հանգամանքը, որ «*քաղաքականությունն առկա է ամենուր, որտեղ կա համագործակցություն, հակամարտություն և կառավարում կամ երբ էլ որ հնարավոր է, որ ինչ-որ սոցիալական հարաբերություն կարգավորվի տարբեր կերպ՝ աշխատատեղի քաղաքականությունից մինչև սեռական քաղաքակա-*

նություն» [20, էջ 71]: Համգործակցություն, հակամարտություն և կառավարում իրականացնող խմբերն ու անհատները տեխնոգեն հասարակությունում ոգեղեն սկզբի կարիք ունեն, այլապես կխախտի հասարակության արժեքային հավասարակշռությունը, իսկ ներծին հակամարտությունները կդառնան խորապես պառակտիչ ու անկառավարելի (կամ կվերաճեն կառավարելի քաոսի): Այս առումով ՀՀ քաղաքական ապագայի տեսակետից ուշագրավ է այն, որ ոգեղենության հիման վրա Հոգևոր Հայաստան կառուցելու քաղաքագիտական հասկացությունը զարգացրել է քաղաքագետ Մ. Մարգարյանը, ինչը հիմնվում է հայ քաղաքական-հոգևոր-մշակութային տեքստի վերաարժևորման անհրաժեշտության վրա պայմանավորված տուրբուլենտ աշխարհակարգի ստեղծված ապագաբանական անորոշություններով: Եթե ինքնության հիմնայուններից են ստեղծագործ ոգեղենությունն ու պետականամետ արարչագործությունը, իսկ Հոգևոր Հայաստանի գաղափարն անպայմանորեն ներառում է ՀԱՅԿ դառնալու գործընթացը, ապա տեխնոլոգիան ու գիտական նորարարությունները պետք է դիտարկել որպես համակարգեր, որոնք ազգաշինության երկարաժամկետ գործընթացի անքակտելի մասն են: Ո՛վ կամ ինչպիսի՞ն է ՀԱՅԿԸ հարցն ունի բազմաշերտ պատասխանաբանություն:

Ուստի, քաղաքական դերակատարների միջև ուղիղ և հորիզոնական երկխոսությունը՝ քաղաքական հաղորդակցությունը, արդի տուրբուլենտության պայմաններում գործառնելու հնարավորություն է պետք դիտարկել: Աշխարհի տարբեր մասերում աշխարհաքաղաքական զարգացումների պատմությունը վկայում է դերակատարների միջև քաղաքական հաղորդակցության բացակայության ու ձախողման միջև ուղիղ կապի առկայության մասին: Որպես օրինակ՝ Սուևարտոյի ավտորիտար ռեժիմի տապալումից հետո հապճեպ ազատականացմանը պատրաստ չէին ո՛չ ինդոնեզական հասարակությունը, ո՛չ քաղաքական առաջնորդները [13, էջ 252]: Բանն այն է, որ քաղաքական առաջնորդները «տասնամյակներ շարունակ կազմակերպել էին իրենց քաղաքական գործունեությունը ավտորիտար կառավարման ձևավորած խիստ վերահսկողության սահմաններում՝ միանալով կառավարության հավանությանն արժանացած կուսակցություններին կամ օգտագործելով իրենց ոչ ֆորմալ հեղինակությունը մասնակցելու էլիտայի բանակցություններին» [13, էջ 252], ուստի չէին կարող քաղաքական տուրբուլենտության պայմաններում հմտորեն օգտագործել քաղաքական նոր իրողությունների ընձեռած հնարավորությունները: Թերևս այս ընկալումներով պայմանավորված էլ մասնագետները գալիս են եզրահանգման, որ «քաղաքական

միջավայրում անորոշությունները, ներառյալ «Բռնազիտի» հանրաքվեն Միացյալ Թագավորությունում, միջազգային լարվածությունն ու հակամարտությունները, զորքալ սահաբեկչության չդադարող սպառնալիքը աշխարհում ավտոկրատ, շուլի-նիստական ու ծայրահեղ դեպքերում՝ ֆաշիստական ուժերի տարածման հետ մեկտեղ բոլորը նպաստում են տուրբուլենտ քաղաքական ժամանակների» [14, էջ 2]:

Ինչպես արդեն նշեցինք՝ արդի քաղաքական տուրբուլենտությունը ենթադրում է քաղաքական դերակատարների հորիզոնական և ուղղահայաց հաղորդակցություն: Այսպիսով քաղաքական հաղորդակցության միջոցների թվին կարելի է դասել ոչ միայն քաղաքական առաջնորդների ուղերձներն ու լրատվամիջոցների ստեղծված խոսույթը, այլև սոցիալական մեդիան որպես քաղաքացիավար քաղաքական հաղորդակցության տիրույթ: Նմանատիպ գործիքակազմի մաս են կազմում ապատեղեկատվություն, հայիոյախոսություն, ապակողմնորոշող վերլուծություններ տարածող, անհայտ քաղաքական նպատակներով ու հովանավորչությամբ գործող կեղծ օգտահաշիվներն ու լրատվական կայքերը:

Ավաճն ավելի անորոշ է դարձնում քաղաքական հաղորդակցության տեսակը սոցիալական հարթակների միջավայրում: Ուստի կարևոր է առաջնորդվել այն վարկածով, որ սոցիալական հարթակներում ստեղծված խոսույթը կարևոր է քաղաքական հաղորդակցության և՛ միկրո, և՛ մակրո մակարդակներում: Այն հնարավորություն կտա իրատեսորեն ըմբռնելու քաղաքական երևույթները և դուրս բերելու քաղաքական հաղորդակցության այս տեսակին բնորոշ օրինաչափություններ և փոփոխականներ:

Հեղինակի մեկնաբանությունը փաստում է, որ դերակատարների փոխհարաբերություններում առկա է գործառնական ենթատեքստ, իսկ երկխոսության հանրային մշակույթի կամ կառուցակարգերի բացակայության, ներքին անհաշտ դիմակայության պայմաններում կարող են ձևավորվել հանրային արտահայտչամիջոցների ու ինքնակազմակերպման անտեսանելի ձգտումներ:

Արդի տուրբուլենտության և քաղաքական ապագայի սահմանումը. «լուռ զարգացման» հայեցակարգ

Մետամոդեռնիզմի քաղաքական մեկնաբանության հեղինակ Ջեյսոն Անանդա Չոգեֆտոն Ստորմն ասում է. «Կասկածը գովեցին հասկացողությունից առավել: Ճշմարտությունը համարեցին կեղծիք: Գիտելիքը ոչ այլ ինչ էր, քան ուժ: Փոխտոպիայական խնդիրները վերածնակերպվեցին որպես լեզվի խնդիրներ, իսկ հետո լեզուն ինքը դարձավ խնդիր: Հաղորդակցությունը կասկածի

տակ դրվեց (was rendered suspect): Թարգմանությունը համարվեց անհնարին: Գիտնականները հռեռնես դարձան բառի՝ աշխարհին արտագոյեղու կարողության հարցում» [19, էջ 1]:

Փաստորեն հանրային համերաշխությունն ինչ-որ առումով կախված է սոցիալական հարթակների խոսույթի քաղաքական նշանակությունը ճիշտ ըմբռնելուց և որպես հետևանք հանրային հարաբերությունների կարգավորման կառուցակարգեր ստեղծելու ֆորմալ և ոչ ֆորմալ կարողությունների զարգացումից: Ուստի, հողվածում առաջարկվող վերլուծության արդյունքում «արդի տուրբուլենտություն» եզրը սահմանում ենք որպես գլոբալ կառավարման հիմնախնդիրներով պայմանավորված բազմակարգակ ու բազմագործոն անկայուն վիճակ աշխարհաքաղաքական, քաղաքակրթական, ներհասարակական փոխակերպումների համայնապատկերում: Այն փաստորեն մի կողմից կապված է քաղաքական ապագայի հետ՝ անվտանգային, աշխարհաքաղաքական անորոշությունների մասով, իսկ մյուս կողմից՝ որպես բազմակարգակ երևույթ, քաղաքական հաղորդակցության տիրույթում ենթադրում է, քաղաքացիական դերակատարների և ինստիտուտների համակարգային վերլուծություն: Հետագա հետազոտությունները պետք է նպաստեն արդի տուրբուլենտության զանազան դրսևորումների պայմաններում գործառնող քաղաքացիական հասարակության ինստիտուտների և քաղաքական դերակատարների քանակական ու որակական աճի հիմնախնդիրին: Այս համատեքստում առաջարկում ենք նկատի ունենալ «լուռ զարգացման» ազգային հայեցակարգի մշակման անհրաժեշտությունը ևս: Այն իրենից ենթադրում է թվային, քաղաքացիավար այլընտրանքային աշխարհակարգերի առկայության գիտակցման, աշխարհաքաղաքական վեկտորների համարժեքության սկզբունքով բազմակողմ զարգացման ռազմավարության մշակում արտաքին քաղաքականության, ռազմաքաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, առողջապահական, բնապահպանական, իրավական համագործակցության ոլորտներում: Հատկապես կարևոր է, որ «լուռ բազմակողմ զարգացման» հայեցակարգը ռազմավարական և գաղափարական արմատներ գցի ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ ավանդական ու նոր ձևավորված հայկական սփյուռքի գաղթօջախներում: Ցանցային հնարավորությունների ընդլայնման, մարդկային ռեսուրսների մեկտեղման, հորիզոնական մարդկային կապերի զարգացման միջոցով ոչ միայն պետությունը որպես ազգի քաղաքական-ինստիտուցիոնալ ձև, այլև համայն հայությունը որպես էթնոմշակութային, քաղաքացիական հավաքականություն կարող են

ստեղծել իրենց հնարավորությունները ճիշտ գնահատելու և իրացնելու կառուցակարգ: Այս հանգուցակետում էլ հասվում են արդի տուրբուլենտություն և քաղաքական ապագա հասկացությունները: Ի վերջո, քաղաքական ապագան ի մոտո առնչվում է և՛ սոցիոմշակութային, սոցիալ-հոգեբանական, և՛ աշխարհաքաղաքական ու միջազգայնագիտական ոլորտներին: Այսպիսով, հողվածում կատարված վերլուծության հիման վրա «քաղաքական ապագա» եզրը սահմանում ենք որպես անվտանգային և աշխարհաքաղաքական իրողությունների համալիր, որը գործառնում է և՛ ինստիտուցիոնալ (պետական), և՛ անհատների (քաղաքացիական) մակարդակներում: Նրան բնորոշ են բազմադերային, դինամիկ հավասարակշռությունը, գլոբալ հիմնախնդիրների հետ փոխազդեցությունների տիրույթը:

Քաղաքական ապագայի ձևավորումն այն առումով է քաղաքակրթական և մարդաբանական, որ դրան անմիջականորեն մասնակցում են մարդկային զանգվածները: Եթե քաղաքացիական հասարակության ինստիտուտները հնարավորություն են ստեղծում զանգվածային մասնակցության այլընտրանքային ձևերով քաղաքական ապագայի կառուցման գործընթացում ներգրավվելու, ապա հեղափոխականացված զանգվածները ազդեցիկ մասնակցությունից բացի հանդիսանում են նաև դարակազմիկ փոփոխությունների էներգիայի կրիչներ: Այսօր նորագույն տեխնոլոգիաների միջոցով և՛ հեղափոխական է, և՛ քաղաքացիական մասնակցության հակվածություն ունեցող քաղաքացիներն ու խմբերն ունեն քաղաքական ապագայի կերտման նոր գործիքակազմ, ինչը վերահաստատում է քաղաքացիական հասարակության ինստիտուտների քանակական ու որակական փոփոխությունների անհրաժեշտության մասին մեր համոզմունքը: Քաղաքացիական հասարակության ինստիտուտներ կարող են դիտարկվել հայկական գաղթօջախների կրթական հաստատությունների միավորող ցանցերը, հայ ավանդական ընտանիքը, հայկական բանակը և կազմակերպական առումով թերևս ցանցային ամենամեծ ներուժն ունեցող Հայ առաքելական եկեղեցին հանուն հայության անվտանգ ապագայի: Այստեղ, անվտանգ ապագա ասելով մասնավորապես նկատի ունենք արդար հասարակարգի հաստատումը, երբ ազգային ռեսուրսների համաչափ և ըստ արժանիքների բաշխման արդյունքում ներհասարակական և ներպետական կյանքում հաստատվում է կայուն համերաշխություն: Այստեղ արժանի է հիշատակության ակադեմիկոս Վ. Ներսեսյանցի՝ «իշխող ու իշխանամետ սեփականատերերին» ուղղված բազմանշանակ կոչը:

«Մի մոռացե՛ք ձեր սեփականության ու ձեր իշխանության կոնկրետ տեղի և կոնկրետ ժամանակի մասին: Ձեր առջև մի հասարակություն է, որը դեռևս հրաժեշտ չի տվել իր սոցիալիստական անցյալին և հրաժեշտ չի տա, քանի դեռ այս կամ այն ձևով ձեզանից չի ստացել սոցիալիստական ժառանգությունից իրեն հասանելիք արդարացի մասը» [27, էջ 13]: Հայաստանում 2018-ին «թավշյա հեղափոխությանը» երիտասարդության ակտիվ և կազմակերպված մասնակցությունը մեր կարծիքով անհրաժեշտ է հասկանալ հենց Վ. Ներսեայանցի մեկնաբանության տիրույթում: Իսկ հեղափոխություն-քաղաքական ապագա կապն ամենևեին նորություն չէ: Ուստի, լուր քազմակողմ զարգացման հայեցակարգ-մշակույթը կարող է կամրջել ապագաբանական հիմնախնդիրները լուծելու նպատակ ունեցող անհատներին և խմբերին հանուն հզոր Հայաստանի տեսլականի նյութականացման:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Abdullah N. A., Bastidas Cruz J. F., Arrazola S.**, Imagining Possible Futures: A Comparative Analysis, Journal of Future Studies, Vol. 29 (1), 2024, 21-39 pages, DOI: 10.6531/JFS.202409_29(1).0003
2. **Brooks A. C.**, America’s Crisis of Civic Virtue, Journal of Democracy Volume 35, Number 2, April, 2024.
3. **Burbank J. and Cooper F.**, Post-Imperial Possibilities: Eurasia, Eurafica, Afroasia, Princeton University Press, 2023.
4. **Cheng J.**, Contextualizing China’s AI Governance. In: Mahrenbach L. (ed.), Governing Artificial Intelligence, Durham: Global Policy, 2023.
5. **Dargin J.** (ed), The Rise of the Global South: Philosophical, Geopolitical and Economic Trends of the 21st Century, World Scientific Publishing Co. Pte. Ltd., 2013.
6. **Ding A. S. and Panda J. P.** (eds.), Chinese Politics and Foreign Policy Under Xi Jinping: The Future Political Trajectory, Routledge Studies on Think Asia, 2021.
7. **Gatune J., Ozor N., Oriama R.**, The Futures of Bioeconomy in Eastern Africa, Journal of Future Studies, Vol. 25(3), 2021, pages 1-14 DOI: 10.6531/JFS.202103_25(3).0001
8. **Glazer N.**, Democracy and Deep Divides, Journal of Democracy, Volume 21, Number 2, April 2010.
9. **Gwagwa A. and Townsend B.**, Re-imagining Africa’s sovereignty in a digitally interdependent world. In: Mahrenbach L. (ed.), Governing Artificial Intelligence, Durham: Global Policy, 2023.
10. **Howe P.**, Eroding Norms and Democratic Deconsolidation, Journal of Democracy, Volume 28, Number 4, 2017.
11. **Kamran Kh.**, Pakistan’s Generational Mind-Sets and Alternative Futures, Journal of Future Studies, Vol. 28(4), 2024, pages 115-124 DOI: 10.6531/JFS.202406_28(4).0008
12. **Le Monde**, Macron says Netanyahu 'mustn't forget his country was created by a UN decision', Last accessed on 18.10.2024. Available at https://www.lemonde.fr/en/international/article/2024/10/15/macron-says-netanyahu-mustn-t-forget-his-country-was-created-by-a-un-decision_6729464_4.html#
13. **Mietzner M.**, Military Politics, Islam, and the State in Indonesia: From Turbulent Transition to Democratic Consolidation, Institute of Southeast Asian Studies, Singapore, 2009.
14. **Moufahim M.** (ed.) Political Branding in Turbulent Times, Palgrave MacMillan, 2022.
15. **Muzyikina Y. V., Aljanova N. K., Yuldashev T.**, Expanding Islamic Studies Epistemological Apparatus with Futures Studies Tools: The Three Tomorrows, Journal of Future Studies, Vol 28 (3), 2024, pages 31-48 DOI:10.6531/JFS.202403_28(3).0003
16. **Parrat Ch. F.**, Change in international order? An institutional analysis, European Journal of International Security, published online by Cambridge University Press, 27 March, 2024, DOI: <https://doi.org/10.1017/eis.2024.13>.
17. **Rosenau J. N.**, Turbulence in World Politics: A Theory of Change and Continuity, Princeton University Press, 1990.
18. **Smith N.**, American Empire: Roosevelt’s Geographer and the Prelude to Globalization, University of California Press, 2003, 557 pages
19. **Storm J. A. J.**, Metamodernism: The Future of Theory; The University of Chicago, 2021.
20. **Susskind J.**, Living Together in a World Transformed by Tech: Future Politics, Oxford University Press, 2018.
21. **Svyatoslav I. Kaspe**, Global Stasis as a Party System or Welcome to World Civil War 1, Russia in Global Affairs, Volume 22, Number 2, 2024.
22. **Tucker P.**, Global Discord: Values and Power in a Fractured World Order. Princeton University Press Princeton & Oxford, 2022.
23. **Zemánek L.**, Russia’s Sovereignty and Emergence of Pragmatic Polycentrism, Governance and Politics, Volume 1, Number 1, 2022.
24. **Баширов Л. А.**, Политическое будущее России и исламская перспектива. 2011, с. 203. Доступна в: <https://cyberleninka.ru/article/n/politicheskoe-budushee-rossii-i-islamskaya-perspektiva/viewer>
25. **Боришполец К. П., Ружинская Т. И., Степанова Т. Е.**, Политическое будущее России в свете тенденций этнонационального развития, МГИМО(У) МИД РФ. – М., 1996. – 92 с.
26. **Մարգարյան Մ. և Մարգարյան Մ.**, Խաղերի տեսություն. Ինչպես դառնալ առաջնորդ: – Եր, Պետական ծառայություն հրատ., 2024:
27. **Ներսիսյանց Վ. Ս.**, Ցիվիլիզմի մանիֆեստը: Պոստսոցիալիզմը հավասարության, ազատության և արդարության համաշխարհային պատմական առաջընթացում: – Եր., «Նժար» հրատարակչություն, 2001:

Տժանա/Հանձնվել է՝ 12.11.2024
 Рецензирована/Գրախոսվել է՝ 22.11.2024
 Принята/Ընդունվել է՝ 28.11.2024